

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ՊԱՅՄԱՆԱԴԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Վարդուհի Դանիելյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Կոնտրագենտների նույնականացման հարցը, պայմանավորված հաղորդակցության միջոցների առանձնահատկություններով, մշտապես առկա է եղել էլեկտրոնային առևտրի սուբյեկտների համագործակցության ժամանակ: Կողմերի միջև անմիջական հաղորդակցության բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ բարձրանում է կոնտրագենտի անձուն սխալվելու ռիսկը¹: Կողմերի նույնականացման խնդրի լուծման միջոց է էլեկտրոնային ստորագրությունը, ուստի էլեկտրոնային առևտրի զարգացումը նաև էապես պայմանավորվում է էլեկտրոնային ստորագրությունների իրավական կարգավորմամբ: Էլեկտրոնային ստորագրությունների միջոցով նույնականացվում են հեռավորության վրա կնքվող գործարքների կողմերը, և պահպանվում է նամակագրության գաղտնիությունը², հնարավորինս ապահովվում են կնքվող գործարքների հուսալիությունն ու էլեկտրոնային շրջանառության կայունությունը:

Backer & McKenzie իրավաբանական ընկերությունն անցկացրել է համեմատական հետազոտություն, թե տարբեր երկրների օրենքները ինչպիսի ձևակերպում են տալիս էլեկտրոնային ստորագրությանը³: Երկրների մեծ մասում օգտագործվում է «էլեկտրոնային ստորագրություն» (electronic signature), իսկ մյուսներում՝ «թվային ստորագրություն» (digital signature) հասկացությունը: Որոշ երկրներում (օր.՝ Սինգապուրում) երկու հասկացություններն օգտագործվում են զուգահեռաբար: Հայաստանի Հանրապետությունը դրսևորել է համատեղման մոտեցում՝ օրենքը վերնագրելով «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»⁴: Հարկ է ընդգծել, որ Ռուսաստանի Դաշնությունում 2001 թ.-ից ընդունվել և գործում էր «էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքը, սակայն 2011թ.-ին օրենքն էական փոփոխությունների է ենթարկվել, իսկ վերտառությունն է «էլեկտրոնային ստորագրության մասին» ՌԴ օրենք⁵:

էլեկտրոնային ստորագրությունն ավանդական ստորագրության նման չէ: Որպես այդպիսի ստորագրություն կարող են ծառայել էլեկտրոնային նամակի վերջում գրված անձի անունը, ձեռքով կատարված ստորագրության սկանավորված տարբերակը կամ կայքի էջում «Ես ընդունում եմ» (I accept) գրության հաստատումը⁶: Ստորագրությունը կարող է կատարված լինել ցանկացած տառերի, թվերի, սիմվոլների թվային

¹ Խնդիրն այն է, որ պայմանագրի մի կողմը հնարավորություն չունի հավաստիանալու, որ պայմանագիր կնքում է կոնկրետ անձի հետ, այլ կերպ՝ բացակայում է կոնտրագենտի նույնականացնելու հնարավորությունը:

² Տե՛ս **John Dickie**, *Internet and Electronic Commerce Law in the European Union*, Oxford, North America, 1999, էջ 35:

³ Տե՛ս <http://www.bmck.com/ecommerce/countrvcomp.html>, (մուտք՝ 20.07.2012թ.):

⁴ Տե՛ս թիվ ՀՕ-40 օրենք, ընդունվել է 14.12.2004թ.-ին, ուժի մեջ է 15.01.2005թ.-ից:

⁵ Տե՛ս թիվ 63-Փ3 դաշնային օրենք, ընդունվել է ՌԴ Դաշնային խորհրդի կողմից 25.03.2011թ.-ին, ուժի մեջ է 06.04.2011թ.-ից:

⁶ Տե՛ս *E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media*, Fourth Edition, editor Mike Butler, Great Britain, 2011, էջ 185:

կարգով, որոնք հավելվում են էլեկտրոնային փաստաթղթին դրա իսկությունը հաստատելու համար: Ներկայումս տարածում են գտել նաև սարքեր, որոնք թույլ են տալիս ստորագրել էկրանի վրա և ձեռքի ստորագրությունը թվայնացնել: Մի շարք էլեկտրոնային ստորագրությունների միջոցով անգամ հնարավոր է որոշել, թե երբ է կազմվել և ստորագրվել փաստաթուղթը¹: **Թվային ստորագրությունը** էլեկտրոնային ստորագրության տեսակ է: Այն անձի անվան կամ ազգանվան հետ որևէ առնչություն չունի և փաստաթուղթը կողավորելու միջոց է, որը մյուս կողմն ապակողավորում է, եթե նրան դրա համար տրվել է անհրաժեշտ բանալի: Հարկ է ընդգծել, որ ներկայումս մշակվում են գրաֆիկական ծրագրեր, որոնք հնարավոր կդարձնեն թվային և էլեկտրոնային ստորագրությունների համատեղումը, այսինքն՝ անձի անվան և ազգանվան թվայնացնող կողավորումը²:

Թվային ստորագրությունների օգտագործումը դեռևս համընդհանուր տարածում չի ստացել, սակայն պայմանագրի մյուս կողմին նույնականացնելու համար օգտագործվում են այլ միջոցներ ևս: Այս միջոցները ներառում են էլեկտրոնային նամակի ուղարկումը, ֆաքսիմիլային հավաստիացումն այն մասին, որ էլեկտրոնային ձևով պայմանագիրը ստորագրվել է հենց այդ անձի կողմից³: էլեկտրոնային փոստի օգտագործումը, սակայն, հաճախ հանգեցնում է բարդությունների. հաղորդագրություն ստացողը չի կարող հաստատապես նշել, որ դա ուղարկված է հենց այն անձի կողմից, որի հասցեից ստացվել է, և որ այդ անձն օժտված է գործարքներ կնքելու լիազորությամբ: Բացի դրանից, վտանգ է ստեղծվում, որ հաղորդագրությունը կարող է այլ անձի կողմից կազմված կամ փոփոխված լինել: Այդ է խնդիրը, որ, չնայած ոչ շատ կիրառելիության և տարածվածության, թվային ստորագրությունն առայժմ միակ միջոցն է, որն ապահովում է հուսալիության հնարավոր ամենաբարձր մակարդակ:

Թվային ստորագրությունները ստեղծվում են կրիպտոգրաֆիայի միջոցով, որը բարձրագույն մաթեմատիկայի ճյուղ է: Դրա միջոցով հաղորդագրությունները դառնում են անմատչելի, իսկ այնուհետև վերածվում ընթերցելի: Ստորագրությունները հիմնված են կողավորման սիմետրիկ և ասիմետրիկ մեթոդների վրա: Առաջին դեպքում երկու կողմերը օգտագործում են մի բանալի, որը հայտնի է միայն իրենց: Երկրորդի դեպքում օգտագործվում են մի քանի բանալիներ⁴: Բանալիներ ասելով՝ պետք է հասկանալ սիմվոլների որոշակի կրիպտոգրաֆիական հաջորդականություն, որը թույլ է տալիս ստեղծել թվային ստորագրություն կամ ստուգել դրա իսկությունը: Բանալիները տարբեր երկրների օրենսդրությամբ կոչվում են տարբեր կերպ՝ բաց և փակ, հանրային և մասնավոր: Այդ բանալիները որևէ առնչություն չունեն անձի հետ, դրանք պարզապես թվային համախմբեր են: Մասնավոր բանալին օգտագործվում է թվային ստորագրության ստեղծման համար, և այն հաղորդագրությունը դարձնում է անընթերցելի, իսկ մյուսը՝ հակառակը: Ենթադրվում է, որ մասնավոր բանալու տերն այն պետք է գաղտնի պահի: Հիմնականում մասնավոր բանալին պահվում է քարտերի կամ այլ էլեկտրոնային կրիչների վրա: Չնայած մասնավոր ու հանրային բանալիները մաթեմատիկորեն փոխկապված են, սակայն անհնար է հանրային բանալու իմա-

¹ Տե՛ս **Martien Schaub**, *European Legal Aspects of E-commerce*, Amsterdam, 2004, էջ 131-132:

² Տե՛ս <http://www.arx.com/information/digital-electronic-signature/digital-signature-software.htm> (մուտք՝ 17.07.2012թ.)

³ Տե՛ս **Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge**, *International Business Law, a Transactional Approach*, 2nd edition, US, 2006, էջ 544:

⁴ Տե՛ս **I. Twomeu, D. Jennings, M. Fox**, *Andersons's Business Law and the Legal Environment*, 18th edition, US, 2002, էջ 301:

ցությամբ ստանալ մասնավոր բանալու համախումբը¹:

«Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՌԴ դաշնային նախկին օրենքն օգտագործում էր բաց և փակ բանալի հասկացությունները, սակայն 2011թ. փոփոխություններից հետո բաց և փակ բանալիների փոխարեն օգտագործվում են «էլեկտրոնային ստորագրության բանալի» և «էլեկտրոնային ստորագրության ստուգման բանալի» արտահայտությունները²: Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային ստորագրության ստեղծման և ստուգման տվյալներ հասկացությունները օգտագործվում են նաև Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) «էլեկտրոնային ստորագրությունների մասին» 1999/93/EC դիրեկտիվում³: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը չի օգտագործում բանալիներ հասկացությունը: Դրա փոխարեն օրենքի 2-րդ հոդվածում տրվում է էլեկտրոնային ստորագրության ստեղծման և ստուգման տվյալների հասկացությունը, որոնք համընկնում են ՌԴ օրենքում տրված վերոնշյալ հասկացությունների հետ: Այսպես, *ըստ մեր օրենքի՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալներ ասելով՝ հասկանում ենք պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն ստորագրող անձն օգտագործում է իր էլեկտրոնային թվային ստորագրությունը յուրաքանչյուր անգամ կիրառելիս*. Փաստորեն, էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալները հայտնի են միայն ստորագրության սեփականատիրոջը: Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ ասելով՝ հասկանում ենք պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր անգամ էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար: Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները կարող են տրվել ցանկացած անձի՝ ստուգելու համար ստորագրության իսկությունը: Այդ տվյալները ստեղծում է ստորագրող անձը կամ հավաստագրման կենտրոնը:

Քանի որ էլեկտրոնային միջավայրում կողմերը հաճախ միմյանց չեն ճանաչում, չեն ունեցել որևէ գործնական փոխհարաբերություն, ուստի միմյանց նկատմամբ վստահություն հիմնականում չեն ունենում, հանրային բանալին մյուս կողմին տրամադրելու համար անհրաժեշտ է լինում երրորդ անձի առկայություն, որն էլ հավաստագրման կենտրոնն է⁴: Մասնավոր բանալին ապագա ստորագրողին տալով՝ հավաստագրող կենտրոնը տալիս է նաև հավաստագիր, որը պարունակում է հանրային բանալին և այն անձի անունը, ում այն տրվում է: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը փաստաթուղթ է՝ թղթի, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա, որը հաստատում է ստորագրող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելությունը և ծառայում է էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց*: Հավաստագրի հիմնական գործա-

¹ St´u UNCITRAL Model Law on Electronic Singatures with Guide to Enactment, New York, 2002, էջ 22:

² St´u <http://graph.garant.ru:8080/SESSION/PILOT/main.htm> և <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=72518> (մուտք՝ 18.07.2012թ.-ին):

³ St´u http://eur-lex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexapi!prod!

CELEXnumdoc&numdoc= 31999L0093&model=guichett (մուտք՝ 01.10.2012թ.)

⁴ St´u UNCITRAL, Promoting confidence in electronic commerce: legal issues on international use of electronic authentication and signature methods, Vienna, 2009, 19-20 էջեր:

ռույթը ստորագրողին համապատասխան հանրային բանալու հետ կապելն է¹: Հավաստագիրը ծառայում է նաև որպես թվային ստորագրության իսկության ստուգման միջոց²: Այն կարող է ունենալ ժամկետ: Մինևույն ժամանակ հանրային բանալին հասանելի դարձնելու համար հավաստագիրը պետք է հրապարակվի հավաստագրերի շտեմարանում, որը դրանց առջանց բազան է³:

Էլեկտրոնային նույնականացման օրենսդրությունը տարբեր երկրներում տարբեր կերպ է զարգանում: Այս կապակցությամբ գիտության մեջ առաջ են եկել երեք մոտեցումներ՝ միհիմնալիստական, տեխնոլոգիական և փոխկապված (two-tiered):

1. **Միհիմնալիստական մոտեցման** պարագայում պահպանվում է տեխնոլոգիական չեզոքություն: Այս մոտեցումը կոչվում է միհիմնալիստական, քանի որ տալիս է նվազագույն իրավական կարգավիճակ էլեկտրոնային ստորագրության բոլոր տեսակներին: Էլեկտրոնային ստորագրությունները ձեռագիր ստորագրությանը համարժեք են դիտվում: *Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԱԿՄԱԻՀ) մշակած «էլեկտրոնային առևտրի մասին» նմուշային օրենքի 7-րդ հոդվածը էլեկտրոնային հաղորդագրության աուտենտիկությունն ապահովելու համար նախատեսում է, որ եթե օրենքը պարտադիր է համարում անձի ստորագրության առկայությունը, ապա այդ պահանջը էլեկտրոնային հաղորդագրության կապակցությամբ համարվում է կատարված, եթե*

ա. օգտագործվել է մի մեթոդ, որը հնարավորություն է տալիս անհատակացնել անձին և ցույց տալ, որ նա տվել է իր համաձայնությունը էլեկտրոնային հաղորդագրության մեջ ներառվող տեղեկությանը,

բ. այդ մեթոդը հուսալի է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է կոնկրետ հանգամանքներում տվյալ էլեկտրոնային հաղորդագրության ստեղծման կամ հաղորդակցության համար:

Փաստորեն, հոդվածը հատուկ ուշադրություն է դարձնում ստորագրության երկու գործառույթներին՝ փաստաթղթի հեղինակին հայտնաբերելու և այդ փաստաթղթի բովանդակությանը նրա կողմից համաձայնվելու փաստը հաստատելու: Յուրաքանչյուր անգամ օգտագործված մեթոդի թույլատրելիությունը որոշելիս պետք է հաշվի առնվեն իրավական, տեխնիկական և առևտրային գործոններ՝ պայմանադիր կողմերի կողմից օգտագործված տեխնիկական միջոցներն ու ծրագրերը, կողմերի առևտրային գործունեության բնույթը, այդ կողմերի միջև գործարքների կնքման հաճախականությունը, պայմանագրի տեսակը, ստորագրության կոնկրետ նպատակն ու գործառույթը տվյալ իրավական միջավայրում, առևտրային սովորույթների և պրակտիկայի հետ համահունչ լինելը, ոչ հեղինակային հաղորդագրությունների հայտնաբերման մեխանիզմների առկայությունը⁴: Փաստորեն, նմուշային օրենքը հենվում է մի մոտեցման վրա, որը հաճախ անվանվում է գործառական-համարժեք մոտեցում: Այդ մեթոդով վեր են հանվում ավանդական գրավոր ձևի նպատակները, գրավոր ձևի գործառույթները, իսկ այնուհետև փորձ է արվում

¹ Տե՛ս UNCITRAL Model Law on Electronic Signatures with Guide to Enactment, նույն աշխատությունը, էջ 27:

² Տե՛ս M Bacchetta, P. Low, A. Mattoo, L. Schuknecht, H. Wagerand, M. Wehrens, Electronic Commerce and The Role of the WTO, Switzerland, 1998, էջ 38:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 39:

որոշել, թե դրանք ինչպես կարող են պահպանվել էլեկտրոնային միջոցներով¹:

«էլեկտրոնային ստորագրության մասին» ՄԱԿՄԱԻՀ-ի նմուշային օրենքի 6-րդ հոդվածը, էլեկտրոնային ստորագրությունների կիրառման կրկին տեխնոլոգիապես չեզոք մոդել նախատեսելով հանդերձ, առավել մանրամասն է կարգավորել էլեկտրոնային ստորագրությունների հուսալիության որոշման հարցը: Մասնավորապես, հիշյալ դրույթի համաձայն՝ էլեկտրոնային ստորագրությունը կարող է համարվել վստահելի, եթե.

ա. ստորագրության ստեղծման տվյալները կապված են այն ստորագրողի և ոչ որևէ այլ անձի հետ,

բ. այդ տվյալները ստորագրման պահին եղել են ստորագրողի և ոչ այլ անձի վերահսկողության ներքո,

գ. էլեկտրոնային ստորագրության ցանկացած փոփոխություն հայտնաբերելի է,

դ. այն դեպքերում, երբ պարտադիր է երաշխավորել, որ փաստաթուղթը միասնական ու ամբողջական է, տեղեկության ցանկացած փոփոխություն կարող է հայտնաբերվել:

ՄԱԿՄԱԻՀ-ի առաջադրած նման մոտեցումն արդարացված ենք համարում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական արագընթաց զարգացումները: Բացի դրանից, այս մոտեցումը թույլ է տալիս կողմերին, որպեսզի իրենք ընտրեն իրենց նախընտրելի տեխնոլոգիան: Ներպետական օրենսդրությամբ այսպիսի մոտեցման առկայության պարագայում էլեկտրոնային ստորագրության համարժեքության հարցի որոշումը կատարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի կողմից կոնկրետ գործի կապակցությամբ²:

2. **Տեխնոլոգիական մոտեցման** դեպքում էլեկտրոնային ստորագրության թույլատրելիության ապահովման համար պարտադիր է որոշակի տեխնոլոգիայի օգտագործումը: Նման դեպքում օրենքը, օրինակ, պարտադիր է համարում հանրային բանալիների օգտագործումը: Այսպիսին էր կարգավորումը Գերմանիայում մինչև ԵՄ դիրեկտիվի ընդունումը: Այս մոտեցման թերությունն այն է, որ հաճախ բացառվում են հուսալիության նույն մակարդակը տրամադրող այլ տեխնոլոգիաները, ինչի հետևանքով այս մոտեցումը կարող է ունենալ հակառակ ազդեցություն էլեկտրոնային առևտրի զարգացման վրա: Քննարկվող մոտեցման պարագայում էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացումը և նորանոր տեխնոլոգիաների առաջացումը ու դրանց կիրառումը ևս բացառվում են: Բացի դրանից, ոչ բոլոր հարաբերություններում է անհրաժեշտ լինում հուսալիության այդքան բարձր մակարդակ ապահովել: Շատ դեպքերում կողմերը շեշտը դնում են գործարար շրջանառության արագության ու պարզության վրա:

3. **Փոխկապված մոտեցման** դեպքում օրենսդրությունը էլեկտրոնային ստորագրություններին տալիս է ձեռագիր ստորագրություններին հավասար կարգավիճակ՝ հիմնվելով տեխնոլոգիապես չեզոք չափանիշի վրա, սակայն բարձր հուսալիություն տրամադրող տեխնոլոգիաները պետք է համապատասխանեն որոշակի պահանջների: Այսպիսի օրենսդրություն է մշակվել առաջին հերթին Սինգապուրում, այնուհետև՝ Եվրոպական միությունում (էլեկտրոնային ստորագրություն և առաջադեմ (advanced) էլեկտրոնային ստորագրություն)³:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

² Տե՛ս նույն տեղում, 36-39 էջեր:

³ Տե՛ս նույն տեղում, 40-42 էջեր:

Այսպես, ԵՄ 1999/93/EC դիրեկտիվով ստորագրությունները տարանջատվում են երկու կարգի՝ էլեկտրոնային ստորագրություն և առաջադեմ էլեկտրոնային ստորագրություն (advanced electronic signature)¹: *Դիրեկտիվի 2-րդ հոդվածում էլեկտրոնային ստորագրությունը բնորոշվում է որպես էլեկտրոնային ձևով տեղեկություն, որը կցվում է կամ վերաբերում է այլ էլեկտրոնային տեղեկությանը և ծառայում է որպես նույնականացման միջոց: Էլեկտրոնային ստորագրությունը համարվում է առաջադեմ, եթե այն բավարարում է հետևյալ պահանջները.*

- այն ուրույն կերպով կապված է ստորագրող անձի հետ,
- այն թույլ է տալիս որոշել ստորագրողին,
- այն ստեղծվում է այնպիսի միջոցների օգտագործմամբ, որոնք ստորագրողը կարող է պահել իր միանձնյա հսկողության ներքո,
- այն կապակցված է այլ տվյալների հետ այնպես, որ դրանց ցանկացած հաջորդական փոփոխություն կարող է բացահայտվել:

Այս չափանիշների առկայությունը թույլ է տալիս ճանաչել էլեկտրոնային ստորագրությունը որպես առաջադեմ, և այն կարող է օգտագործվել դատարանում որպես ապացույց: Նման ստորագրություններն ունեն այն նույն իրավական ուժը, ինչ թանաքով կատարված ձեռագիր ստորագրությունները²:

Այն էլեկտրոնային ստորագրությունները, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ պայմաններին, մտնում են ստորագրությունների առաջին կատեգորիայի մեջ: Դրանք չեն ապահովում հուսալիության այն մակարդակը, ինչ առաջադեմ էլեկտրոնային ստորագրությունները³: Այդուհանդերձ, դիրեկտիվի 5-րդ հոդվածը թույլ չի տալիս զրկել էլեկտրոնային ստորագրությունը իրավաբանական ուժից և որպես ապացույց ընդունելուց միայն այն հիմքով, որ այն.

- ունի էլեկտրոնային ձև կամ
- չի հիմնվում որակավորված հավաստագրի վրա կամ
- չի հիմնվում հավատարմագրված հավաստագրող ծառայություն ապահովողի կողմից տրված որակավորված հավաստագրի վրա կամ
- չի ստեղծվել ապահով ստորագրություն ստեղծող սարքի միջոցով:

Վերոնշյալ դիրեկտիվի ընդունմամբ անդամ պետությունները համապատասխանեցրել են իրենց օրենսդրությունը ԵՄ դիրեկտիվի պահանջներին:

Հարկ է, սակայն, ընդգծել, որ դիրեկտիվի հիմնական բացթողումներից է այն հանգամանքը, որ անդրադառնում է միայն ստորագրության իրավական կարգավիճակին՝ անտեսելով այդ փաստաթղթի իրավական կարգավիճակին, որին այն կցված է, մինչդեռ ստորագրության հիմնական նպատակը դրանով ստորագրված փաստաթղթին իրավական որոշակի կարգավիճակ ընձեռելն է⁴:

Անհրաժեշտ է նշել, որ «էլեկտրոնային ստորագրության մասին» ՌԴ օրենքի 2011 թ. ինկորպորացիայի համաձայն՝ էլեկտրոնային ստորագրությունը էլեկտրոնային ձևով տեղեկություն է, որը կցված է էլեկտրոնային ձևով այլ տեղեկության (ստորագրվող տեղեկություն), և որն օգտագործվում է տեղեկությունը ստորագրող անձի նույնականացման համար: Ընդ որում օրենքի վերջին փոփոխություններով՝ ստորագրությունները տարանջատվում են երկու տեսակների՝ հասարակ էլեկտրոնային ստոր-

¹ Տե՛ս **Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge**, նշվ. աշխ., էջ 544:

² Տե՛ս **E-commerce and Convergence, A guide to the Law of Digital Media**, նույն աշխատությունը, 186-187 էջեր:

³ Տե՛ս **Larry A. DiMatteo, Lucien J. Dhooge**, նշվ. աշխ., էջ 544:

⁴ Տե՛ս **Martien Schaub**, նշվ. աշխ., 131, 141 էջեր:

րագրություն և ուժեղացված էլեկտրոնային ստորագրություն (усиленная электронная подпись): Վերջինս էլ իր հերթին տարանջատվում է երկու ենթատեսակների՝ չորակավորված էլեկտրոնային ստորագրություն և որակավորված էլեկտրոնային ստորագրություն: Այս երկու ենթատեսակների միջև միակ տարբերությունն այն է, որ որակավորված էլեկտրոնային ստորագրությունը պետք է բավարարի չորակավորված ստորագրության բոլոր պահանջները, սակայն էլեկտրոնային ստորագրության ստուգման բանալին պետք է նշված լինի հավաստագրում, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրության ստեղծման և ստուգման համար պետք է օգտագործվեն այնպիսի միջոցներ, որոնք բավարարում են օրենքի բոլոր պահանջները¹:

Ըստ «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի. «էլեկտրոնային թվային ստորագրություն է համարվում էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանաձևանների եզակի հաջորդականությունը, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթղթի պաշտպանվածությունն ապահովվելու նպատակով էլեկտրոնային փաստաթուղթը կարող է ներառել մեկ կամ մի քանի էլեկտրոնային թվային ստորագրություններ: էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար»:

Օրենքում տրված էլեկտրոնային թվային ստորագրության հասկացությունից հետևում է, որ չնայած դրանում առկա չէ որոշակի տեխնոլոգիայի օգտագործման պարտադիր պայման, սակայն միաժամանակ թվային ստորագրություն չհամարվող էլեկտրոնային ստորագրություններին որևէ իրավական կարգավիճակ և ճանաչում տրված չէ, այդ իսկ պատճառով գտնում ենք, որ մեր օրենքի նման իրավակարգավորումը առավելապես, չնայած և որոշ առանձնահատկություններով (որոշակի տեխնոլոգիաների կիրառման պահանջի բացակայություն), համապատասխանում է վերևում հիշատակված տեխնոլոգիական մոտեցման հատկանիշներին:

ՀՀ օրենքում «էլեկտրոնային թվային ստորագրություն» ձևակերպումը, մեր կարծիքով, պետք է պարզապես փոխարինվի «թվային ստորագրություն» արտահայտությամբ, քանի որ տեսության մեջ հայտնի և պրակտիկայում շատ ավելի տարածում ստացած էլեկտրոնային ստորագրության այլ տեսակների (կողեր, գաղտնաբառեր, մատնահետքեր, անուն-ազգանուն) կիրառումը նման կարգավորման պարզայում բացառվում է: Օրենսդրի նման ձևակերպումը ճշգրտորեն համապատասխանում է շատ երկրներում, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերում տրված թվա-

¹ Տե՛ս <http://graph.garant.ru:8080/SESSION/PILOT/main.htm> և <http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=72518> (մուտք՝ 18.07.2012թ.-ին):

յին ստորագրության հասկացությանը: Ավելին, նման կարգավորումը օրենքում որևէ այլ ձևակերպման բացակայության պարագայում (օր.՝ կարող էր նախատեսված լինել, որ բոլոր այլ էլեկտրոնային փաստաթղթերը, որոնք ապահովված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, չեն կարող զրկվել իրավական ուժից միայն այն հիմքով, որ էլեկտրոնային են) բոլոր այլ էլեկտրոնային փաստաթղթերը զրկում է իրավական և ապացուցողական ուժից: Ուստի առաջարկում ենք «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը ձևակերպել «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենք վերտառության մբ: Նման պարագայում օրենքում հարկ է նախատեսել էլեկտրոնային ստորագրության, իսկ այնուհետև թվային ստորագրության հասկացությունները, որոնցից առաջինը պետք է լինի շատ ավելի լայն և ընդգրկի նաև թվային ստորագրությունը որպես իր տարատեսակ: Էլեկտրոնային ստորագրության հասկացությունը չպետք է լինի սահմանափակ, այլ պետք է հնարավոր համարի անձի նույնականացման ցանկացած միջոց, եթե այն կլինի հուսալի, և եթե վստահաբար հնարավոր կլինի որոշել, որ բովանդակությունը փոփոխության չի ենթարկվել: Նման պարագայում օրենքով, փաստորեն, հաշվի կառնվեն նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում սպասվող բոլոր հետագա զարգացումները ծրագրային և ապարատային ապահովման առումով: Բացի դրանից, օրենսդիրը կարող է ավելի հեռուն գնալ և նախատեսել այնպիսի իրավական կարգավորում, ինչպիսին նախատեսվել է ԵՄ դիրեկտիվով: Ստորագրությունների երկու տեսակների (էլեկտրոնային ստորագրություն և առաջադեմ էլեկտրոնային ստորագրություն, որը նույնն է, ինչ թվային ստորագրությունը) նախատեսումը կկայունացնի ու կպարզեցնի էլեկտրոնային շրջանառությունը, ինչպես նաև կաշխուժացնի ԵՄ-ՀՀ էլեկտրոնային առևտրաշրջանառությունը:

ELECTRONIC SIGNATURE AS A METHOD OF IDENTIFYING PARTIES

Varduhi Danielyan

PhD student at the YSU Chair of Civil Law

The author suggests making amendments in the Armenian law on "Electronic documents and electronic digital signatures". The law now regulates only one type of electronic signature; that is electronic digital signature. Due to such regulation legal validity of other electronic signatures (different passwords, codes, names and surnames) is dismissed and electronic documents, to which other types of signatures are attached, do not have valid legal force. The author suggests providing the definition of electronic signatures and stipulating that electronic digital signature is a more secure type of such signatures. Moreover, the legislature can take into account EC regulation and promote circulation of electronic documentation between the EU and Armenia.

ЭЛЕКТРОННАЯ ПОДПИСЬ КАК СРЕДСТВО ИДЕНТИФИКАЦИИ СТОРОН

Вардуи Даниелян

Аспирантка кафедры гражданского права ЕГУ

Автор предлагает внести поправки в закон РА об "Электронных документах и электронных цифровых подписях". В частности, закон регулирует только один тип электронной подписи – электронную цифровую подпись. Из-за такого регулирования правовая обоснованность других электронных подписей (различные пароли, коды, имена и фамилии) игнорируется, и электронные документы, к которым прикрепляются такие подписи, не имеют никакой юридической силы. Автор предлагает дать определение электронных подписей и предоставления электронной цифровой подписи как более одобренного типа таких подписей. Кроме того, законодательный орган может даже дать такое же регулирование, как и в ЕС в целях содействия электронному документообороту между Арменией и ЕС.

Բանալի բառեր- էլեկտրոնային թվային ստորագրություն, էլեկտրոնային ստորագրություն, էլեկտրոնային առևտուր, թվային ստորագրություն

Ключевые слова: электронная цифровая подпись, электронная подпись, электронная коммерция, электронная цифровая подпись.

Key words: *electronic digital signature, electronic signature, electronic commerce, digital signature.*